

կան մեծերէն մէկ քանին՝ 1640ին Դաւիթի պատ-
րիարքութեան ատեն՝ յաջողեցան նաեւ 10-13 ամիսի
չափ պատրիարքական աթոռն ելնելով՝ կառավարել
ժողովուրդը, առանց եկեղեցականի առանց կրօնա-
կան նուիրապետութեան։

1630-33ին կը փայլէ Պրուսացի Անտոն Զէլէպին
բաղմանարուստ, որ տուաւ շատ դրամ՝ Փիլիպպոս կա-
թողիկոսին՝ Էջմիածինի մեծ դանդակատունին շինու-
թեան համար։ 1632-1633ին Պոլիսի ընկէ հայերուն
մէջ տիրած էր իշխելու և եկեղեցական եկամուտներն
ինքնահրաման տնտեսելու յաւակնութիւն մը, որով ա-
րեւելիները՝ այսինքն Անատոլոյէն եկողները կը նկա-
տուէին արհամարութեամբ մը իբրեւ «գոհիկ», ըստ
Առաքել Դաւրիթեցոյ։ Արեւելիներն ալ միշտ կը բո-
ղոքէին, որով երկուստեք անպակաս կըլլար կոխն և
դուռ կը բանար մեծ ծախքերու. Փիլիպպոս կաթո-
ղիկոս շատ աշխատեցաւ վերջ տալ այս վէճերուն։

1632ին կը յիշուի Խաչկոյ անուն իլովացի հայ դա-
տաւոր մը, որ կաթողիկոսական խնդիրի մը համար կու
գայ Պոլիս՝ իլովի հայերուն կողմէն և ազդեցութեամբը
կը կարգադրէ դայն. սա ինքն ալ՝ իր ժամանակի ամի-
րապատիւներէն էր։

1633ին նորէն կարգ մը մեծատուններ ձեռք կառնեն
պատրիարքական տեղապահութիւնը։ Ասոնցմէ մէկ
քանին կը վարէին եւրոպական դեսպաններու թարգ-
մանչութիւնը, տեղեակ էին արեւմտեան պատմութեանց
ու սովորութեանց ալ։ Քանի մը տարիէն՝ քսան և
չորսի հասած կը գտնենք թիւն այս տեղակալներուն,
որոնց մէկ քանիին անուններն են՝ Խոճայ Տափուտ, Խան-
ճի Սէֆէր, Էքմէքճի Պէկլէր, Քէրէստէճի Գրիգոր,
Սիմէոն երէց, Քիւրքճի օղլու երէց, Պօտուռ Սիմէոն,
Մկրտիչ, Մուրատ, Յարութիւն Պալի, Ֆէրատ օղլու
և այլն. և ասոնց ձեռննտուն էր՝ յիշեալ վանցի Ռու-

տպուած է երկու մեծահատոր ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹԵԼԷ-
ՄԱՔԻՆ, թարգմանութիւն Մարգար Զաքարիայի
Խօջեմց։

1. Զատիեան Գ. էջ 627-629։